ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 4, 2007, Կոնգրես հյուրանոց

Ժողովի բացում.

Բացման խոսքով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր Գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը (Բացման ուղերձը կցվում է): Ա. Հովսեփյանը նախ շնորհակալություն հայտնեց ժողովի բոլոր մասնակիցներին ներկա գտվելու համար և մաղթեց հանդիպման հաջող ընթացք: Պարզաբանելով Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի գումարման նպատակները և խնդիրները՝ Ա. Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնապես ուժի մեջ մտնելու օրվանից անցել է մեկ տարի և ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) առաջին կազմի լիազորությունները մոտենում են ավարտին, ինչը ենթադրում է ՇԽ նոր ընտրություններ: Այդ նպատակով նախաձեռնվել է շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը՝ որպես մասնակիցներ հրավիրելով ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված բոլոր ոչ առևտրային և ոչ պետական կառույցների ներկայացուցիչներին, հաստատելու ՇԽ անդամների թափուր տեղերի ընտրության Կարգը և ընտրելու ընտրական հանձնաժողովը, որն էլ կղեկավարի ընտրական գործընթացները: Ընտրական կարգի նախագիծը մշակել և ժողովի ուշադրությանն է ներկայացնում ներկա ՇԽ-ը: ՇԽ 4 անդամները, որոնք ընտրվել էին 2 տարի ժամկետով կշարունակեն իրենց գործունեությունը ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում, սակայն հետագայում այս մոտեցումը այլևս չի կիրառվի:

Քվեարկության մանդատներ ստացած մասնակիցների թիվը 155 էր: *Մասնակիցների կազմը* կցվում է:

Ընդհանուր ժողովին մասնակցում էին նաև ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրեն Ալեքս Ռասինը, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև դիտորդներ մի շարք միջազգային կազմակերպություններից:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.

Ժողովի նախագահողի և հաշվիչ հանձնաժողովի ընտրություն

Նիստը վարելու համար Արա Հովսեփյանը առաջարկեց ընտրել ժողովի նախագահող: Առաջադրվեցին հետևյալ թեկնածությունները՝

1. Արթուր Սակունց, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տնօրեն
2. Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն
3. Արայիկ Հովհաննիսյան, Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ, ՇԽ անդամ

Ա. Հովսեփյանը ինքնաբացարկ հայտարարեց և առաջարկեց քվեարկության դնել մյուս երկու թեկնածությունները՝

Քվեարկության արդյունքում ձայների պարզ մեծամասնությամբ **նիստի նախագահող ընտրվեց Ա. Հովհաննիսյանը:**

Նախագահողը առաջարկեց ընտրել ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմը: Առաջարկված Ս. Սեդրակյանի (Ֆերմերային շարժում ՀԿ), Վ. Համբարձումյանի (“Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա” ԻԱՄ), Ս. Սարգսյանի (Խոյ ՋՕԸ) և Ա. Բարեղամյանի թեկնածությունները հաստատվեցին միաձայն:

<u>ՈՐՈՇՈՒՄ. Ընտրվեցին Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի նախագահը՝ ի դեմս Ա. Հովհաննիսյանի և հաշվիչ հանձնաժողովը՝ ի դեմս Ս. Սեդրակյանի, Վ. Համբարձումյանի, Ս. Սարգսյանի և Ա. Բարեղամյանի:</u>

Այնուհետև, նախագահողը առաջարկեց հաստատել օրակարգը:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

<u>Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.</u>

ՇԽ անդամների թափուր տեղերի ընտրության Կարգի նախագծի ներկայացում, քննարկում և հաստատում

ՇԽ անդամների ընտրության Կարգի նախագիծը ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց ՇԽ անդամ Նազելի Վարդանյանին:

Ն. Վարդանյանը նշեց, որ ներկայացված Կարգի նախագիծը արդյունք է ՇԽ անդամների և քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչների երկարատև աշխատանքի: Ն. Վարդանյանը համառոտ ներկայացրեց Կարգի հիմնական կետերը՝ նաև շեշտադրելով այս և նախորդ Կարգերի միջև եղած նմանությունները և տարբերությունները: Ն. Վարդանյանը նշեց, որ ՇԽ-ը որոշում է ընդունել վիճարկելի հարցադրումներից մեկը ներկայացնել ընդհանուր ժողովի դատին և որոշմանը՝ դա ընտրություններին սպառողական կոոպերատիվների մասնակցության հարցն է: Այդ է պատճառը, որ Կարգի 3.1 կետը նախագծում ներկայացված է երկու հնարավոր տարբերակներով և առաջարկվում է քվեարկությամբ ընտրել դրանցից մեկը:

Այնուհետև, նախագահողը հայտարարեց հարց ու պատասխան՝ խնդրելով մասնակիցներին կանգ չառնել վերոնշյալ 3.1 կետի վրա, քանի որ այդ հարցի շուրջ նախատեսվում է անցկացնել առանձին քննարկում:

Հարց եղավ ՋՕԸ-երի մասնակցության կարգավիճակի վերաբերյալ, որին Ն. Վարդանյանն ի պատասխան նշեց, որ Կարգը նախատեսում է, որ ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված բոլոր ՋՕԸ-երը իրավունք ունեն մասնակցելու ՇԽ ընտրություններին և՛ որպես ընտրող, և՛ որպես ընտրվող:

Սպառողական կոոպերատիվների ՇԽ ընտրություններին մասնակցելու կողմ և դեմ դիրքորոշումները ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց նախ Աբգար Եղոյանին

(Սպառողների իրավունքների պաշտպանություն ՀԿ նախագահ). Ա. Եղոյանը դեմ արտահայտվեց սպառողական կոոպերատիվների մասնակցության համար՝ այն պատճառաբանելով երկու հանգամանքներով: Առաջինը՝ ՍԿ-ները այսօր հանդես չեն գալիս որպես լիարժեք քաղաքացիական հասարակության անդամներ և իրավունք ունեն վարելու ձեռնարկատիրական գործունեություն, և երկրորդը՝ նախորդ ընտրության փորձը ցույց է տալիս, որ չնայած նախորդ ընտրությանն իրենց մասնակցության՝ ՍԿ-ները ներկայացված չեն եղել ՇԽ-ի կազմում, որը խոսում է այն մասին, որ ՍԿ-ները ընտրություններին մասնակցել են համաձայն նախօրոք որոշված ցուցակների:

ՍԿ-ների մասնակցությունը հիմնավորեց և կողմ փաստարկները ներկայացրեց ՇԽ անդամ Վ. Համբարձումյանը. նա նշեց, որ ըստ համապատասխան օրենսդրության գոյություն ունեն երկու կարգի կոոպերատիվներ՝ առևտրային կոոպերատիվներ և ոչ առևտրային շահույթ չհետապնդող սպառողական կոոպերատիվներ (ՍԿ): Այժմ խոսքը գնում է շահույթ չհետաղնդող ՍԿ-ների մասին, որոնք կոչված են պաշտպանելու ֆերմերների շահերը և աջակցելու նրանց: Բացի դրանից, հաշվի առնելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի բնույթը՝ ՍԿ-ները հանդիսանում են ծրագրային շահառուներ և պետք է ներկայացված լինեն ՇԽ-ում:

Ելույթներից հետո մասնակիցները հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց հարցերը և մեկնաբանությունները.

Հանդես եկավ Վաղարշապատ ՋՕԸ-ի տնօրեն Սուրիկ Սեդրանյակը և նշեց, որ եթե հաշվի առնեք ՀՄՀ-Հայաստան ծրագրի հիմնական նպատակները և ուղղությունները, կարելի է ասել, որ ներկա կազմակերպություններից շատերը, մասնավորապես ՍԿ-ները և ՀԿ-ները չեն առնչվում ծրագրին: Իսկ ՍԿ-ների համագործակցությունը գյուղացիների հետ կարելի է համարել զուտ բիզնես:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանի հարցադրումը վերաբերում էր ՍԿ-ների ձեռնարկատիրական գործունեության ծավալելու հնարավորություններին և նպատակներին: Այս հարցադրման կապակցությամբ ՇԽ անդամ Ն. Վարդանյանը նշեց, որ ՍԿ-ները, ինչպես նաև հիմնադրամները և ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ծավալելու ձեռնարկատիրական գործունեություն, սակայն այն տարբերությամբ, որ արդյունքում ստացված եկամուտը ուղղվում է ոչ թե անհատների կարիքներին, այլ կազմակերպության նպատակների իրականացմանը:

Վերջնական քվեարկությունից առաջ նախագահողը առաջարկեց գրանցել մասնակիցներին. **արդյունքում քվեարկության համար գրանցվեցին 114 մասնակիցներ:**

Քվեարկության դրվեց ՇԽ ընտրությունների Կարգի 3.1 կետի առաջին տարբերակը՝ «*Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, միությունները, պետական մասնակցություն չունեցող հիմնադրամները, ջրօգտագործողների ընկերությունները և* ***սպառողական կոոպերատիվները****, որոնք ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ 01.01.2007»:*

Արդյունքը՝ 20 կողմ, 90 դեմ, 4 ձեռնպահ:

Այնուհետև, քվեարկության դրվեց ՇԽ ընտրությունների Կարգի 3.1 կետի երկրորդ տարբերակը՝ «*Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, միությունները, պետական մասնակցություն չունեցող հիմնադրամները և ջրօգտագործողների ընկերությունները* ***(բացառությամբ***

<u>սպառողական կոոպերատիվների)</u>, *որոնք ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ 01.01.2007»*

Արդյունքը՝ 88 կողմ, 20 դեմ, 3 ձեռնպահ:

Քվեարկության արդյունքում ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունվեց Կարգի 3.1 կետի երկրորդ տարբերակը:

Նախագահողը առաջարկեց քվեարկությամբ հաստատել նաև ՇԽ ընտրական կարգը:

Արդյունքը՝ 104 կողմ, 1 դեմ, 3 ձեռնպահ ձայներով հաստատվեց ՇԽ անդամների ընտրության կարգը:

<u>ՈՐՈՇՈՒՄ. Հաստատվեցին ա) ՇԽ անդամների թափուր տեղերի ընտրության Կարգը և բ) կարգի 3.1 կետի երկրորդ տարբերակը (սպառողական կոոպերատիվները չեն կարող մասնակցել առաջիկա ՇԽ ընտրություններին):</u>

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ.

Ընտրական հանձնաժողովի ընտրություն

Համաձայն ընտրությունների կարգի՝ ընտրական հանձնաժողովը ձևավորվում է ինքնաառաջադրմամբ: Հաշվի առնելով այս փաստը՝ ժողովի նախագահողն առաջարկեց շահագրգիռ մասնակիցներին առաջադրվել որպես ընտրական հանձնաժողովի անդամներ՝ ընդհանուր առմամբ 7 անդամներ:

Առաջադրվեցին հետևյալ թեկնածությունները՝

1. Հովհաննիսյան Միհրան, Եղվանդ ՋՕԸ, Կոտայքի մարզ
2. Կարապետյան Թաթուլ, Մարտունի ՋՕԸ, Գեղարքունիքի մարզ
3. Շահինյան Տիգրան, «Շահեն» երիտասարդական ՀԿ, Գեղարքունիքի մարզ
4. Թագվորյան Վահե, «Խորհրդատու» բարեգործական հիմնադրամ, Շիրակի մարզ
5. Լեփեջյան Արտեմիս, Սուրբ Սանդուխտ Տիկնանց Միություն, Երևան
6. Աբգարյան Անահիտ, «Թալին-հույս» սոցիալական ՀԿ, Արագածոտնի մարզ
7. Պեպանյան Նանե, «Լուսաստղ» ՀԿ, Պեպանյան Նանե, «Լուսաստղ» ՀԿ, Լոռու մարզ

Առաջարկվեց հաստատել վերոնշյալ թեկնածուներին որպես ընտրական հանձնաժողովի անդամներ: Առաջարկությունը հաստատվեց 107 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

<u>ՈՐՈՇՈՒՄ. Ընտրվեց և հաստատվեց ընտրական հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.</u>

1. **<u>Հովհաննիսյան Միհրան, Եղվանդ ՋՕԸ (նախագահ)</u>**
2. **<u>Կարապետյան Թաթուլ, Մարտունի ՋՕԸ</u>**

3. Շահինյան Տիգրան, «Շահեն» երիտասարդական ՀԿ
4. Թագվորյան Վահե, «Խորհրդատու» բարեգործական հիմնադրամ
5. Լեփեջյան Արտեմիս, Սուրբ Սանդուխտ Տիկնանց Միություն
6. Աբգարյան Անահիտ, «Թալին-հույս» սոցիալական ՀԿ (քարտուղար)
7. Պեպանյան Նանե, «Լուսաստղ» ՀԿ

Ժողովի փակում.

Ժողովը ամփոփելու նպատակով ձայնը տրվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանին: Ա. Հովսեփյանը շնորհավորեց ընդհանուր ժողովի մասնակիցներին ՇԽ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ իրականացված առաջին իրադարձության կապակցությամբ: Նա նաև նշեց, որ ՇԽ-ի միջոցով քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստանում մասնակցելու ծրագրին և ապահովում է իրական խորհրդակցական գործընթաց: Այնուամենայնիվ, ՇԽ-ը միակ մեխանիզմը չէ ՀՄՀ-Հայաստան ծրագրին տեղեկանալու և մասնակցելու համար. ՀՄՀ-Հայաստանը խրախուսում է հասարակության մասնակցությունը տարբեր միջոցներով՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վեբ կայք, արտագնա հանդիպումներ, բաց դռների քաղաքականություն և այլն: Ներկա ՇԽ ընտրական Կարգը նախատեսում է հնարավոր բոլոր մեխանիզմները ազատ և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու նպատակով, որը նաև ենթադրում է քաղաքացիական հասարակության կողմից ակտիվ մասնակցություն և հետաքրքրություն:

Նախագահողը հայտարարեց ժողովի ավարտը:

Նախագահող՝ Ա. Հովհաննիսյան

Նիստն արձանագրեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը:

4-ը սեպտեմբերի, 2007, Երևան